

ըլլալով՝ իւր անուկը տուած է ամբողջին՝
Թորթումի:

Ինձիճեանի գրած ատեն՝ «պատմի
զնախկին հայկազուն բնակչաց Թորթումայ
թէ ձանձրացեալք ի բռնութենէ եւ ի
զրկանաց, դարձան առ հասարակ ի կրօնս
տաճկաց». իսկ գիւղերն՝ «ըստ մասին բնա-
կեալ ի Հայոց եւ ըստ մասին ի Տաճկաց»
(էջ 93—94): Այսօր իրերն աւելի յոռե-
ցած են. բայց եւ այնպէս այսօր ալ այս
աշխարհը գոնէ խառն բնակչութիւն ունի.
եւ հայ գիւղերու շարք մը կայ, մասամբ
խառն՝ մեծ մասամբ անխառն բնակչու-
թեամբ, գաւառին ամէն կողմը, գիւղերէն
ունանք նաեւ մեծ բնակչութեամբ: Այսպէս
Խախուտակաւին մեծաւ մասամբ հայ է:
Բայց մինչ Ապրանէն (Կ. Abernes) հայ է,
այլ եւս չէ գիւմաղի Բըրն մարդաշատ
ձորը (Կ. Kyscha): Տակաւին 1880 ի յօ-
րինուած վիճակացոյց մը Թորթումի հայ
եւ մահմետականացած գիւղերու՝ կը նշա-
նակէր Բըրնա իբր 800 տնով քրիստոնեայ
ձոր մը¹: Բայց այսօր Բըրնայի հայերն այլ

¹ Ս. Էրեւելեան. «Բնաշխարհիկ բառարան», Հար-
թ., վենետ. 1907, էջ 51. այսպէս նաեւ Ա. Գ. Օ., «Վա-
նի, Պիթիսի եւ Էրզրումի վիլայէթները», Երեւան 1912,
էջ 201: